

Հատիկը յաճախ խառնուելէ ու լաւ մը չորնալէ ետք կը տարուէր Սէքէնը :

Հոն ծանր քարին տակ ճղմուելէ ու թեփը հանուելէ վերջ կը բերուէր տուն :

Խոշոր խոնկերու վրայ մէկ կողմէն հինրուելէ վերջ կ'անցնէր աղացողին ձեռքը :

Նահապետական երկանաքարին առջեւ նստած կ'ըլլային դրացի կանայք կամ մասնաւոր երկամբ աղցողներ : Մեր օրերուն այր ու կին այդ աշխատանքին լծուած էին Իսկէնտէրեան Համբար աղան ու Թոմարզացի կէօզսիւղ Աւետիս :

Հետաքրքրական էր այդ արարողութիւնը կանացի աղմուկ, եռուզեռ, կրօնական երգեր ու տաղեր, մէկ ձեւի վրայ պաղտաշ նըստած ու փոշեթաթախ, մէկ ձեռքով կ'աղային, միւսով ալ ցորենը կը լեցնէին երկանաքարի վրայի բացուածքէն : Փայտեայ կամրջակի թանձրութենէն կախում ունէր ձաւարի աստիճանը :

Կուգար պահ մը երբ մկանները յոգնած ու կոկորդները չորցած կ'ըլլային, ձանձրոյթը ծայր կուտար, բայց յանկարծ աղացողներ կ'ոգեւորուէին, թոնիրը կը վառուէր, տանտէրը ճաշի պատրաստութեան կը լծուէր :

Քիչ յետոյ ախրացը ֆը՛զզ կ'ընէր ու նոր ձաւարով հատապուրջ կ'եփուէր մ'չափներու ճաշին համար : Կալիմ մէջ աշխատող Եզիմ դուռը չեմ կապեր, նոր ձաւարով եփելու են :

Խրախճանք էր այս համայնական ճաշը, սաղլըխով, պերնի համով ուտելի դրամէք ընելու մաղթանքներ եւ օրհնութիւն ամէն կողմերէ :

Աղցուած պուլըուրը կը մաղուէր ու անդամ մը եւս հովին տըրուելէ, Էօրնուելէ ետք կ'ամբարուէր : Բարակ ու մանր պուլըուրը կը կոչուէր Սըմըր, որով նոյնանուն ապուր մը կ'եփուէր իւղով ու սոխրացով :

Մնացեալ փոշին կը կոչուէր պէլէմիւր կամ Տէլէլիւր որը ոմանք փոխինդի համար կը դործածէին, բայց ընդհանրապէս տղաք իրենց գրպանը լեցուցած կ'ուտէին ասիերով :

1912էն վերջ մեքենան սկսաւ կատարել երկանաքարին դործը :

Ծաղկաւեր դէմքով կոյր թուրք մըն էր աղօրիքին տէրը որ իր օգնականով կուգար շուտով լրացնելու այդ ծանր աշխատանքը :

Խաշած չոր ցորենը կ'անցնէր ձեռքով դարձող դլանաձեւ երկաթներու մէջտեղէն ու կը ջարդուէր ուզուած աստիճանով :